ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

19 փետրվարի 2024թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-07

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Սոնա Խալաֆյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի և Արմեն Ասատրյանի կազմով, 2024թ. փետրվարի 19-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը 11.01.2024թ. որոշմամբ սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Խորհուրդն ուսումնասիրել է հավակնորդ Սարգիս Միրզոյանի 05.02.2024թ. ներկայացրած հայտը: Հայտի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդը

Պ Ա Ր Զ Ե Ց

Համաձայն Խորհրդի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին 11.01.2024թ. որոշման՝ հավակնորդը պետք է ներկայացնի մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ

օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) հավաստող փաստաթղթերի պատճեններ և դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթղթեր:

Սարգիս Միրզոյանի 05.02.2024թ. ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությամբ չէր հաստատվել վերջինիս կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու փաստը, ինչպես նաև չէին ներկայացվել ՀՀ Կառավարության՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին 30.05.2019թ. N 685-Ն որոշման 3-րդ հավելվածի 2-րդ, 2.1-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստաթղթերը նարկոլոգիական և հոգեկան հիվանդությունների բացակայության վերաբերյալ, ինչպես նաև դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանքում բացակայում էր սրտաբանի կողմից համապատասխան նշումը: Խորհուրդը, Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով, Ս.Միրզոյանին ծանուցել է հիշյալ փաստաթղթերի բացակայության վերաբերյալ և առաջարկել մինչև սույն թվականի փետրվարի 14-ը ամբողջականացնել և համապատասխանեցնել իր դիմումին կից ներկայացված փաստաթղթերը Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Սարգիս Միրզոյանը սահմանված ժամկետում թերություններն ամբողջությամբ չի վերացրել, այն է՝ չի ներկայացրել իր կողմից կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման, գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու փաստը հավաստող ապացույցներ: Վերջինս 13.02.2024թ. Խորհրդին ներկայացրել է իր պարզաբանումը, որում նշել է, որ իր գնահատմամբ՝ «Էկզոտարիում Պլյուս» ՍՊԸ-ում, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամում, ԱՄՆ ՄԶԳ «Մենեջմենթ սիսթեմզ ինթերնեշնլ, ինք.» հայաստանյան մասնաճյուղում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում աշխատած ժամանակահատվածում իրականացրել է կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման, գործառույթներ:

Մինչդեռ, Սարգիս Միրզոյանի ներկայացրած պայմանագրերով հավաստվում է, որ վերջինս՝

1. 01.08.2017թ.-30.11.2017թ. աշխատել է «Էկզոտարիում» ՍՊԸ-ում՝ որպես կենդանաբան,
2. 13.12.2017թ.-10.06.2019թ. շարունակել է աշխատել «Էկզոտարիում Պլյուս» ՍՊԸ-ում՝ որպես կենդանաբան:

Համաձայն «Էկզոտարիում» ՍՊԸ-ի և «Էկզոտարիում Պլյուս» ՍՊԸ-ի հետ կնքած աշխատանքային պայմանագրերի՝ Ս.Միրզոյանի գործառույթներն են եղել.

- իրականացնել հաճախորդների շփումը կենդանիների հետ, տեղեկատվություն տալ կենդանիների մասին,
- պահպանել կենդանիների անվտանգությունը և կերակրել նրանց,
- աջակցել կազմակերպության սեփականության պահպանման, նյութական աշխատանքային ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողություն,
- կենդանաբան աշխատողների մասնագիտական խորհրդատվության տրամադրում և նոր կենդանաբան աշխատողների ուսուցման, հավաքագրման իրականացում,
- կենդանիների խնամքի աշխատանքի անվտանգության, մասնագիտական կողմնորոշման, նոր աշխատողների վերապատրաստման իրականացում և նմանատիպ հարցերով տնօրենին աջակցության/խորհրդատվության/ տրամադրում,
- միջոցներ ձեռնարկել կազմակերպության համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու, նրանց գիտելիքները և փորձը արդյունավետ օգտագործելու և զարգացնելու, նրանց կյանքի և առողջության համար աշխատանքի անվտանգ ու բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության պահանջները պահպանելու ուղղությամբ,
- ապահովել կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակումը, կնքումը և կատարումը, աշխատանքային կարգապահության պահպանումը,
- նպաստել աշխատանքային շարժառիթների զարգացմանը, ինչպես նաև աշխատողների աշխատանքային նախաձեռնության և ակտիվության աճին:

3. 12.07.2019թ.-30.11.2019թ. և 17.12.2019թ.-31.08.2020թ. աշխատել է «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամում որպես «Կրթություն հատուկ բժշկական կարիքներ ունեցող երեխաների համար» ծրագրի պատասխանատու:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամում Ս.Միրզոյանի աշխատանքային գործառույթներն են եղել.

- ավարտուն տեսքի բերել Երևանում և մարզերում հիվանդանոցային կամ տնային պայմաններում երկարաժամկետ բուժում ստացող 10-17 տարեկան երեխաների ցուցակը,
- կապ հաստատել ծնողների հետ՝ կրկնուսուցման դասերի համար նախնական համաձայնություն ձեռք բերելու նպատակով,
- կապ հաստատել բոլոր դպրոցների հետ որտեղ երեխաները սովորել են, և ավարտուն տեսքի բերել այն առարկաների ուսումնական պլանը, որոնց բացը պետք է լրացվի կրկնուսուցման միջոցով,
- կազմակերպել կամավորների հավաքագրում Հայկական պետական մանկավարժական համալսարանից և, անհրաժեշտության դեպքում, Երևանի պետական համալսարանի՝ մարզերի մասնաճյուղերից

(հայտարարություններ, հարցազրույցներ, ստորագրել կամավորության պայմանագրեր և այլն),

- կամավորների համար մշակել և անցկացնել առաջադեմ մեթոդների վրա հիմնված վերապատրաստման դասընթաց՝ բժշկական կարիքներ ունեցող երեխաների կրկնուսուցման կազմակերպման նպատակով,
- մշակել անհատական կրկնուսուցման ժամանակացույցեր՝ Երևանում և մարզերում (եթե կիրառելի է) ներգրավված բոլոր երեխաների համար,
- իրականացնել կրկնուսուցումը՝ մշակված ժամանակացույցի համաձայն, անհրաժեշտության դեպքում, ձեռք բերել պայմանավորվածություններ՝ հաշվի առնելով երեխայի պետական և դպրոցական ծրագրերը,
- պահպանել կանոնավոր (առնվազն ամսական կտրվածքով) կապ բոլոր դպրոցների հետ՝ դպրոցական ծրագրերում տեղ գտած թարմացումներին ծանոթանալու և կամավորների տեղեկացնելու համար,
- կամավոր կրկնուսույցներից ամսական կտրվածքով պահանջել 1 էջանոց զեկույցներ՝ յուրաքանչյուր երեխայի հետ գրանցված առաջընթացի և առաջ եկած խնդիրների և մտահոգությունների վերաբերյալ,
- կազմակերպել ամսական միջոցառումներ հիվանդանոցում ներգրավված բոլոր երեխաների համար (ինտելեկտուալ խաղեր, ֆիլմի դիտում, թիմային աշխատանք և այլն),
- կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ՝ ծրագրի վերաբերյալ վերջիններիս կարծիքին ծանոթանալու համար,
- կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ՝ ծրագրի վերաբերյալ վերջիններիս կարծիքին ծանոթանալու համար,
- կազմակերպել նոր կամավորների շարունակական հավաքագրում և վերապատրաստում՝ հավաստիանալու համար, որ ծրագիրն ունի բավարար քանակով կամավորներ՝ նոր երեխաներին սպասարկելու և, անհրաժեշտության դեպքում, միմյանց փոխարինելու համար,
- պահպանել կանոնավոր (առնվազն ամսական կտրվածքով) կապ հիվանդանոցի հետ՝ ծրագրի վերաբերյալ վերջինիս կարծիքին ծանոթանալու և երկարաժամկետ բուժման նպատակով գրանցված նոր երեխաների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով,
- իրականացնել շարունակական հետազոտություն՝ լավ պրակտիկա ունեցող արտասահմանյան նմանատիպ ծրագրերի վերաբերյալ՝ նախագծում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար, որոնք կապահովեն առավելագույն արդյունավետություն և կայունություն,
- բանակցել այլ հիվանդանոցների հետ (օր.՝ Մուրացան)՝ այստեղ երկարաժամկետ բուժման նպատակով գրանցված և դպրոցական դասերից բացակայող ավելի շատ երեխաներ նրգրավելու համար:

4. 30.06.2020թ.-31.12.2020թ. աշխատել է ԱՄՆ ՄԶԳ «Մենեջմենթ սիսթեմզ ինթերնեշնլ, ինք.» հայաստանյան մասնաճյուղում՝ որպես ՀՀ Կոռուպցիայի

կանխարգելման հանձաժողովում մարդկային ռեսուրսների կառավարման և հանրայի ծառայության կրտսեր խորհրդատու:

ԱՄՆ ՄԶԳ «Մենեջմենթ սիսթեմզ ինթերնեշնլ, ինք.» հայաստանյան մասնաճյուղում Ս.Միրզոյանի աշխատանքային գործառույթներն են եղել.

- աջակցել ԿԿՀ անդամներին և մարդկային ռեսուրսների խորհրդատուին ԿԿՀ կազմակերպական կառուցվածքի և կադրային պլանի մշակման, կանոնադրության վերանայման և ճշգրտման գործում՝ հիմնված քաղաքացիական ծառայողների ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության վրա,
- աջակցել ԿԿՀ անդամներին և մարդկային ռեսուրսների խորհրդատուին ԿԿՀ-ում քաղաքացիական ծառայողների պաշտոնների աշխատանքի նկարագրության վերանայման գործում և ընդհանուր աջակցություն ցուցաբերել ԿԿՀ-ին և կատարել հանձնաժողովի անդամների և ԿԿՀ անձնակազմի կողմից հանձնարարված առաջադրանքները:

5. 28.12.2020թ.-31.01.2023թ. և 02.02.2023թ.-13.07.2023թ. աշխատել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում՝ որպես մարդկային ռեսուրսների կառավարիչ-փորձագետ:

Համաձայն աշխատանքային պայմանագրի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում Ս.Միրզոյանի աշխատանքային գործառույթներն են եղել.

- համակարգել և իրականացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի և գլխավոր քարտուղարի մարդկային ռեսուրսների կառավարման գծով հրամանների և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքները.
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստական աշխատանքները,
- համակարգել և իրականացնել պաշտոնների վերլուծություն, գնահատման և դասակարգման աշխատանքները,
- հանձնաժողովի ստորաբաժանումների հետ համատեղ համակարգել և իրականացնել պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի նախապատրաստական աշխատանքներ,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի աշխատողների անձնական գործերի վարման, ինչպես նաև գրանցամատյանի վարման աշխատանքների իրականացումը տեղեկատվական հարթակում,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի թափուր պաշտոններ (բացառությամբ գլխավոր քարտուղարի) զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքները,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների թեստերում ընդգրկվող մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքների կազմման և

տեղեկատվական հարթակում տեղադրման աշխատանքների, ինչպես նաև հարցազրույցի անցկացման ձևաչափի ընտրության մասին համապատասխան առաջարկություն ներկայացնել Գլխավոր քարտուղարին,

- համակարգել և իրականացնել հանձնաժողովի աշխատողների վերապատրաստման կարիքների գնահատման և վերապատրաստման գործընթացի կազմակերպման աշխատանքները,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի պետական ծառայությունում աշխատանքային, այդ թվում ժամկետային աշխատանքային պայմանագրերի կնքման հետ կապված աշխատանքները,
- համակարգել և իրականացնել աշխատողների կադրերի ռեզերվի վարման աշխատանքները տեղեկատվական հարթակում,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի աշխատողներին նշանակման, ազատման, խրախուսանքի, կարգապահական տույժ կիրառելու, ծառայողական քննության անցկացման հետ կապված գործառույթների, արձակուրդ տրամադրելու, գործուղման և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքները,
- համակարգել և իրականացնել թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների հետ կապված նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև ապահովել անցկացվող մրցույթների թեստային և բանավոր հարցաշարերի մշակման և մուտքագրման աշխատանքները,
- մասնակցել հանձնաժողովի և գլխավոր քարտուղարի հրամանների, որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի մարդկային ռեսուրսների կառավարման հարցերով բողոքների, դիմումների և առաջարկությունների ուսումնասիրության, վերլուծության աշխատանքների իրականացումը,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականության մշակման աշխատանքները,
- համակարգել և իրականացնել հանձնաժողովի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացից բխող այլ հանձնարարականներ:

6. 03.09.2021թ.-30.06.2022թ. աշխատել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում՝ որպես «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասախոս,
7. 18.11.2021թ.-10.06.2022թ. աշխատել է Երևանի Գ.Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցում՝ որպես կենսաբանության ուսուցիչ,
8. 12.09.2022 թվականից առ այսօր աշխատում է «Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամում՝ որպես «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Աշխատանքային իրավունք», «Կադրային գործավարություն», «Փաստաթղթաշրջանառություն» և «Կառավարում և առաջնորդում» առարկաների դասախոս:

9. 14.11.2022 թվականից առ այսօր աշխատում է Երևանի Ստ.Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոցում՝ որպես կենսաբանության ուսուցիչ:

Համադրելով Ս.Միրզոյանի կողմից ներկայացված աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրերի դրույթները և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները՝ Խորհուրդը եզրահանգեց, որ Սարգիս Միրզոյանը չի համապատասխանում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջին, այն է՝ վերջինս չունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի, 1-ին մասի, 7-րդ կետը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերը՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավակնորդ Սարգիս Միրզոյանի հայտի ընդունումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ